Հավելված N 2
2023 թվականի հունվարի 23-ին կնքված
«1032-11002/23-ԾԳ» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» (Գյումրի) |
| Դրամաշնորհի N | «1032-11002/23-ԾԳ» |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | 03.01.2023 - 31.12.2023 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.2023 - 30.09.2023 |
| Ներկայացման օր | 06.10.2023 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Հերմինե Գասպարյան, ծրագրի ղեկավար |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորված գործողություններն են.

- Շահառուների կարիքի վերագնահատում և Անհատական սոցիալական պլանների վերանայում
- Ծառայությունների մատուցում՝ ըստ կարիքի գնահատման և անհատական սոցիալական ծրագրի
- Կենցաղային սպասարկում
- Բժշկական օգնություն և սպասարկում
- Սոցիալ-հոգեբանական օգնություն և խորհրդատվություն:

2.2. Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար:

Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է Տնային խնամք ծրագրում ներգրավված շահառուներին ծառայությունների մատուցում՝ ըստ վերջիններիս հետ կնքված պայմանագրի, ծառայությունների մատուցման ժամանակացույցի, կարիքի վերագնահատման արդյունքների և անհատական սոցիալական ծրագրի:
Մասնավորապես՝

**Կենցաղային սպասարկում**

Շահառուներին տրամադրվել է սոցիալական խնամողի ծառայություններ, ով տնայցերի ընթացքում իրականացրել է շահառուի խնամք, տան մաքրում, շահառուի լողացում, մազերի և եղունգների հարդարում, անկողնային պարագաների փոխում, հագուստի փոխում, գնումներ, կոմունալ վճարումներ: Շահառուների լվացքը տեղափոխվել է կենտրոն, լվացվել, արդուկվել և հաջորդ այցելության ժամանակ հետ է վերադարձվել շահառուին: Այն շահառուների լվացքը, որոնք իրենց բնակարաններում ունեն լվացքի մեքենաներ, սոց.խնամողների կողմից կատարվել է շահառուի բնակարանում: Սոցիալական խնամողի կողմից հիմնականում տնայցեր են կատարվել Ա խմբի շահառուներին օրական 2 անգամ՝ 1-ական ժամով և Բ խմբի շահառուներին՝ շաբաթական 2 անգամ՝ 1-ական ժամով: Ըստ շահառուի կարիքի և տարբեր իրավիճակների՝ իրականացվել են նաև հավելյալ այցեր:
*75 շահառուներն ապահովված են կենցաղային սպասարկման, հիգիենայի պահպանման ծառայություններով՝ ըստ անհրաժեշտության: Լվացքի, լոգանքի, տան մաքրության ծառայությունների շնորհիվ բարելավված է շահառուների հիգիենիկ վիճակը: Գնումների և կոմունալ վճարների շնորհիվ շահառուն ապահոված է իրեն անհրաժեշտ ապրանքներով և կոմունալ ծառայություններով, որի իրականցման կատարողականը ամրագրվում է ծառայությունների մատուցման ստուգաթերթում և շահառուի ստորագրությամբ՝ շահառուի մոտ գտնվող ծառայությունների տնային թերթիկում:*

**Բժշկական օգնություն և սպասարկում**

Բուժքույրն իրականացրել է տնայցեր շահառուներին, որի ընթացքում ստուգվել է առողջական վիճակը, իրականացվել է արյան ճնշման, արյան մեջ շաքարի մակարդակի չափում, ըստ անհրաժեշտության կատարվել են ներարկումներ, վերքերի և վնասված հատվածների մշակում և վիրակապում, տրամադրվել է բուժման, ինչպես նաև դեղերի օգտագործման վերաբերյալ խորհրդատվություն՝ ընտանեկան բժշկի հետ համագործակցությամբ: Կատարվել է ուղղորդում դեպի պոլիկլինիկաներ առավել բարդ հետազոտությունների կատարման համար: Բուժքույրը խորհրդատվություն է տրամադրել նաև շահառուներին օգնող անձանց՝ առողջապահական թեմաների շուրջ:
Բուժքրոջ կողմից իրականացվել են այցելություններ Ա խմբի շահառուներին շաբաթական առնվազն 2 անգամ և Բ խմբի շահառուներին՝ շաբաթական առնվազն 1 անգամ: Ըստ շահառուի կարիքի և տարբերի իրավիճակների՝ իրականացվել են նաև հավելյալ այցեր: Այցերի և մատուցված ծառայությունների վերաբերյալ կատարվել են նշումներ ստուգաթերթում, ինչպես նաև շահառուի բնակարանում գտնվող ծառայությունների մատուցման տնային թերթիկում:
Բուժքույրերի կողմից շահառուներին տրամադրվել է այն դեղորայքը, որը պոլիկլիկաներից չեն կարող ստանալ: Դեղորայքը շահառուին տրամադրվել է միայն բժշկի կողմից դուրս գրված դեղատոմսով: Բուժքույրերը լիազորված են նաև շահառուի կողմից նրանց հատկացված դեղորայքը պոլիկլինիկայից ստանալու համար:
*Տրամադրված կանոնավոր բժշկական օգնության, առողջապահական ծառայությունների,*

*դեղամիջոցների տրամադրման և բուժքույրերի հետևողականության շնորհիվ պահպանված և բարելավված է շահառուների առողջական վիճակը:*

**<u>Սոցիալ-հոգեբանական աջակցություն և խորհրդատվություն, ուղեկցման ծառայություններ</u>**

Սոցիալական աշխատողը մշտապես շահառուների կողքին է ցանկացած թղթաբանություն կազմակերպելու կամ սոցիալական ոլորտին առնչվող խորհրդատվություն ստանալու կարիքի դեպքում: Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողի կողմից կատարվել է շուրջ 17 շահառուի ուղեկցում ՄՍԾ, փաստագրում անապահովության գնահատման համակարգում:

Կատարվել է նաև 8 շահառուների ուղղորդում կամ ուղեկցում համայնքապետարան, մարզպետարան կամ այլ պետական կառույցներ, օժանդակութուն աջակցության դիմումների լրացման գործում:

Դեղորայքի ստացման համար սոցիալական աշխատողի կողմից կատարվել է շահառուների անապահովության միավորի տեղեկանքի ստացում, որով բուժքույրերը դեղատներից ստացել են պետության կողմից հատկացվող անվճար դեղորայքը՝ ըստ դեղատոմսերի:

*Շահառուների սոցիալական խնդիրները լուծումներ են ստանում համապատասխան ծառայությունների տրամադրման, խորհրդատվությունների, միջնորդական ծառայությունների կամ անմիջական օգնության միջոցով:*

**<u>Միջոցառման կազմակերպում</u>**

Տարեցների միջազգային օրվան ընդառաջ կատարվել են այցելություններ տարեցների բնակարաններ, շնորհավորել տարեցների օրվա կապակցությամբ, հանձնել նվերներ: Աշխատակիցների անակնկալ այցերը ուրախություն են պարգևել միայնակ տարեցներին՝ կտրելով նրանց միապաղաղ առօրյայից:

Ամսական 2 անգամ կազմակերպվել են աշխատանքային հանդիպում-քննարկումներ, որոնց ժամանակ ամփոփվել են կատարված աշխատանքները, առաջացած հրատապ խնդիրները և պլանավորվել հաջորդ շաբաթվա անելիքները:

*Ծրագրային թիմի կողմից շահառուների համար արժանապատիվ խնամք և սպասարկում կազմակերպելու արդյունքում նրանց կյանքի որակը բարելավված է: Շահառուները հիմնականում ունեն կայուն առողջական վիճակ, բժշկական ծառայությունների հասանելիություն, անհրաժեշտ սոցիալ-հոգեբանական խորհրդատվության, անհրաժեշտ դեղորայքի, սննդի և հիգիենիկ պարագաների հասանելիություն:*

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Տնային խնամք ծրագրի մասին <u>հաղորդում Հանրային ռադիոյում</u>

Տարեցների միջազգային օր՝ <u>https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid034TC3kXiFQGL6pr33UASDaq2ylgaWAyX</u>

dyDQ24djDerCRdcc2t9EQSrKYgsai4fEGI

Բոլոր այցերի, միջոցառումների, իրականացված աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ թղթաբանությունը և նկարները հավաքվում և պահպանվում են:
Եռամսյակային հաշվետվությանը կից ներկայացնում ենք նկարներ և հաջողության պատմություն:

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Արցախում տեղի ունեցող իրադարձությունների պատճառով չեղարկվել են Տարեցների միջազգային օրվա միջոցառումները, միայն կատարվել են այցելություններ շահառուների բնակարաններ:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Ծրագրի հաջորդ եռամսյակում պլանավորվում է շարունակել ծրագրով նախատեսված բոլոր գործողությունները, մասնավորապես.

- Կենցաղային սպասարկում
- Բժշկական օգնություն և սպասարկում
- Սոցիալ - հոգեբանական աջակցության կազմակերպում, ուղեկցման ծառայություններ
- Մշակութային միջոցառման կազմակերպում
- Խորհրդատվական օգնություն:

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

**<u>Սեմինարներ, վերապատրաստումներ, հանդիպումներ</u>**

- Հուլիս-սեպտեմբեր ամիսներին ծրագրի սոցիալական աշխատողը 3 անգամ մասնակցել է Միասնական Սոցիալական Ծառայության Վանաձորի տարածքային կենտրոնին կից Վանաձորի համակարգող խորհրդի ամսեկան նիստերին՝ որպես խորհրդի անդամ: Քննարկվել են նպաստառու ընտանիքներին պետության կողմից հատկացվող սոցիալական օժանդակության հետ կապված ընթացիկ հարցեր:
- Հուլիս 10-11 ծրագրի սոցիալական աշխատողըմանսակցել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն և Word Vision, USAID կազմակերպությունների նախաձեռնությամբ իրականացված սոցիալական աշխատողների վերապատրաստման դասընթացին:
- Սեպտեմբերի 22-ին հանդիպում Շիրակի պետական Համալսարանի «Սոցիալական աշխատանք» բաժնի 3-րդ կուրսի ուսանողները, դասախոս Աշխեն Տոնոյանի ուղեկցությամբ, այցելեցին Հայկական Կարիտասի Գյումրու Տարեցների խնամքի կենտրոն: Տնային խնամք ծրագրի սոցիալական աշխատողը ներկայացրեց ծրագրի գործունեությունը, մատուցվող ծառայությունները և սոց. աշխատանքի

| առանձնահատկությունները: |
|---|

**Ծահառուներ****

| N | Անուն, ազգանուն | Բնակության հասցե | Հեռախոս | ՀԾՀ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ջիլդա Մկրտչյան | Գյումրի, Վ. Սարգսյան, 6շ. Բն.15 | 098 18 10 67 | 7901490098 | |
| 2 | Անահիտ Խալաչյան | Գյումրի, Անի թ, Շահինյան շ.3 բն. 1 | 077 00 32 35 | 5107348262 | |
| 3 | Սերյոժա Մամաջանյան | Գյումրի, Անի թ. 11փ. շ. 7 բն. 15 | 6 13 59 | 2002490260 | |
| 4 | Հովհաննես Շահինյան | Գյումրի, Վ.Սարգսյան, շ10ա, բն. 44 | 077 58 36 56 | 1107462070 | |
| 5 | Սուրա Նիկողոսյան | Գյումրի, Իսահակյան փ. Տ.147 | 5.41.70 | 5115365944 | |
| 6 | Սպարտակ Իսկանդարյան | Գյումրի, Գորկու փ. 1նրբ. Տ. 99 | 094 42 43 29 | 1310450099 | |
| 7 | Մարիամ Հովհաննիսյան | Գյումրի, Ղանդիլյան 159/077 | 077 54 28 61 | 5116326853 | |
| 8 | Շուշիկ Կարապետյան | Գյումրի, Ղուկասյան փ. 115/041 | 093 91 81 39 | 7606410011 | |
| 9 | Կարինե Մկրտչյան | Գյումրի Շիրակացի, 211/226 տն | 077 846475 | 6412400044 | |
| 10 | Մարուսյա Թադևոսյան | Գյումրի, Շիրակացի 2389/098 | 098 165 720 | 5905410194 | |
| 11 | Լիաստան Առաքելյան | Գյումրի, Պուշկինի, 59տ, | 055 66 96 79 | 7502470312 | |
| 12 | Սվետլանա Հակոբյան | Գյումրի,Պ.Սևակ14շ.բն 20 | 093 25 74 23 | 6501380127 | |
| 13 | Վարդ Սաֆարյան | Գյումրի Բուլվարային թ.շ. 7, բն 36 | 098 28 47 09 | 5107411355 | |
| 14 | Շնորհիկ Շահինյան | Գյումրի, Վարդ բաղ 4-րդ թ. Շ. 6բն.9 | 094 79 71 89 | 7408460373 | |
| 15 | Լևոն Փիլոյան | Գյումրի, Վ. Սարգսյան, 213/205 | 098 81 10 57 | 3712550286 | |
| 16 | Լիլիթա Ղազարյան | Գյումրի, Գորկու փ. Շ.104 բն.58 99 | 094 62 66 72 | 6308390054 | |
| 17 | Օֆիկ Ղազարյան | Գյումրի, Ավտոկայան, 121/168 | 093 23 22 97 | 5105420020 | |
| 18 | Սուսաննա Սարգսյան | Հալաբյան փող. 13 շենք, բն. 2 | 077 604 691 | 8010470066 | |
| 19 | Անահիտ Պապիկյան | Գյումրի, Երևանյան խճ 140/028 տ | 094 74 21 12 | 5212500141 | |
| 20 | Էդիկ Մելքոնյան | Գյումրի, Աբովյան 1Նրբ,տ.76 | 5 07 19 | 3507580659 | |
| 21 | Այա Հովհաննիսյան | Գյումրի, Շչերբինա փ. 6ա շ. Բն. 29 | 094 57 36 74 | 7011390189 | |
| 22 | Լալա Բեժանյան | Գյումրի, Տերյան 59 | 077 60 14 71 | 6205400103 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 23 | Ռոզա Մարտիրոսյան | Գյումրի, Ղանդիլյան Փ 47շ. Բն 55 | 093 69 03 77 | 5203450021 | |
| 24 | Լիդիա Մուրադյան | Գյումրի, Մուշ 2, 3 թաղ Քոթեջ 18; Երև Խճ. Քոթեջ 1 | 6.54.62 | 1114330086 | |
| 25 | Մարգարիտա Կաքացից | Գյումրի, Ռեպինի 215/102 | 5 30 71; 098 01 76 36 | 7308450104 | |
| 26 | Սուսաննա Մարանջյան | Գյումրի, Վ. Սարգսյան 6 շ.բն 33 | 6.67.60; 077 26 52 59 | 6211610475 | |
| 27 | Սամվել Նազարյան | Գյումրի, Ղորղանյան 147 | 5.83.56;099 36 76 91 | 1508510202 | |
| 28 | Մարիամ Հովհաննիսյան | Գյումրի, Ռոզի Խանութի մոտ 229/245 | 098 950 249 | 6008450256 | |
| 29 | Հովհաննես Գրիգորյան | Գյումրի, Անի, 5-րդ Թաղ10ա շ. Բն. 1 | 099 65 15 34 | 3514550018 | |
| 30 | Մարո Մխիթարյան | Գյումրի, Աթարբեկյան 121ա | 5 44 31 | 5105400348 | |
| 31 | Ելիզավետա Մկրտչյան | Գյումրի, Տ. Ճարտարապետի շ.4, բն.6 | 093 697 027 | 5111510109 | |
| 32 | Սերգեյ Ծատուրյան | Գյումրի,Կոշտոյան 227 / 314 | 098 5181 67 | 2608490190 | |
| 33 | Աստղիկ Վարդանյան | Գյումրի, Անի 58, Չարենցի փ.1շ. Բն. 4 | 093 96 01 58 | 7214500108 | |
| 34 | Մոմիկ Մինասյան | Գյումրի, Գ. Նժդեհի 20շ.բն1 | 077 29 33 83 | 7903400010 | |
| 35 | Ռուդիկ Սարգսյան | Գյումրի, Գարեգին Ս.Վ.12ա շ. Բն.4 | 094 49 03 50 | 1510460128 | |
| 36 | Մարիամ Կարոյան | Գյումրի, Խրիմյան Հայրիկ 237/703 | 098 38 13 17 | 6309450018 | |
| 37 | Յուրա Մելիքյան | Գյումրի, Գարեգին Նժդեհի | 094 42 08 56 | 2107520011 | |
| 38 | Հեղինար Գասպարյան | Գյումրի, Գ. Նժդեհի 20շ. Բն 10 | 093 480686 | 6408490093 | |
| 39 | Անուշ Մինասյան | Գյումրի, Գ. Նդեh 2 շ. Բն 10 | 098 25 50 59 | 8914470081 | |
| 40 | Սամվել Հովհաննիսյան | Գյումրի, Ավտոկայան, 104/529 | 093 45 01 98 | 3103570023 | |
| 41 | Մարուսյա Գրիգորյան | Գյումրի, Ղուկասյան փ. 115/028 | 093 24 14 68 | 6311480026 | |
| 42 | Բենիկ Գրիգորյան | Գյումրի, Տ. Ճարտարապ, 14ա շ.բն 7 | 094 02 80 13 | 2302800303 | |
| 43 | Ծաղիկ Մկրտչյան | Գյումրի, Չարենցի 13 ա շ. Բն.1 | 094 13 78 66 | 7201590170 | |
| 44 | Ռազմիկ Գևորգյան | Գյումրի,207/390տնՄարտի 8-ի փ.Չերք ծոր | 5 65 90; 077 53 75 15 | 6905400157 | |
| 45 | Նունե Գևորգյան | Գյումրի, Ղուկասյան շարք, 15, բն 9 | 094 117 816 | 7804680023 | |
| 46 | Մարի Այապինա | Գյումրի, Պ.Սևակ 18 շ. Բն.52 | 098 63 57 61 | 7502310053 | |
| 47 | Ասյա Պողոսյան | Գյումրի, Մանուշյան 230/312 տն | 094 967 814 | 6708380013 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 48 | Նինա Կյուրեղյան | Գյումրի, Ռուսթավելու փ. տ. 42 | 094 78 43 18 | 7404550092 | |
| 49 | Ասլի Ալեքսանյան | Գյումրի, Երևանյան Խճ 55շ. Բն.3 | 094 08 24 84 | 6511300021 | |
| 50 | Նորայր Աղայան | Գյումրի, Շահումյան փ. Տ 18 | 094 73 6520 | 1201541530 | |
| 51 | Ռոզա Կապրիելով | Գյումրի, Երևանյան Խճ Քոթեջ 32 | 093 91 69 46; Վալերիա 077 42 51 93 | 5105420241 | |
| 52 | Օլգա Թորոսյան | Գյումրի, Ղուկասյան 8 շարք,տ. 19 | 5.63.81; 055 73 84.60 | 7512360533 | |
| 53 | Անահիտ Զուռնաչյան | Գյումրի, Տ. Ճարտար, 26շ.բն.5 | 6.39.55; 094 338743 | 5107311792 | |
| 54 | Տոսյա Ներսիսյան | Գյումրի, Սպանդարյան փ. Տ. 49 | 077 15 17 45 | 5115381761 | |
| 55 | Թամարա Մինասյան | Գյումրի, փ. Պուշկին, տ 88 | 098 48 26 20 հարևան | 6412410120 | |
| 56 | Էմմա Բուրչակյան | Գյումրի, Տերյան 35 | 5.39.69 | 5209470059 | |
| 57 | Հայկազ Աղաբեկյան | Գյումրի, Շիրակացի 209/114, | 093 83 78 31 | 1104520885 | |
| 58 | Դավիթ Բարսեղյան | Թետչերի փ. 9/8 տուն | 077 78 95 47 | 2811490248 | |
| 59 | Գոհար Կուրղինյան | Գյումրի, Աթարբեկյան 3-րդ նրբանցքտ. 3/1 | 093 63 05 17 | 5501450033 | |
| 60 | Սալվի Հովհաննիսյան | Գյումրի, Երևանյան Խճ 17. բն.16 | 098 00 39 94 | 7504370045 | |
| 61 | Կարապետ Հովհաննիսյան | Գյումրի, Աթարբեկյան փ. Տ 74 | 093 40 17 32 | 3608390128 | |
| 62 | Շուշիկ Թորոսյան | Գյումրի, Լ. Մադոյան փ. տ.155 | 5.59.12 | 6801390112 | |
| 63 | Սոֆյա Մնացականյան | Գյումրի, Սպարտակի փ. տ. 16 | 094 56 33 13; 4.77.28 | 8110530044 | |
| 64 | Նադյա Բաղդասարյան | Գյումրի, Երևանյան խճ, 142շ.բն. 1 | 093 48 60 01 | 7812410099 | |
| 65 | Գրիգոր Եղիազարյան | Գյումրի, Անտառավ III թ.25ա շ.բն 44 | 094 96 14 69 | 1115384007 | |
| 66 | Գրետա Նազարյան | Գյումրի, Տ. Ճարտարապետի շ.32, բն.2 | 098 03 23 34 | 5111510044 | |
| 67 | Լուսյա Սուքիասյան | Գյումրի, Գերցենի 5-րդ նրբ. Տ26 | 093 70 64 48; 3.45.97 | 6007410177 | |
| 68 | Դերենիկ Հակոբյան | Գյումրի, Նար-Դոսիփ. 41 | 077 44 29 48 | 2311350021 | |
| 69 | Սուսաննա Սարգսյան | Գյումրի, Երևանյ. Խճ. 67շ, բն. 4 | 4 56 64 | 5910390023 | |
| 70 | Ռուզաննա Տոնոյան | Գյումրի, Շիրազի փ.20շ. Բն 1 | 094 66 10 61 | 7509550319 | |
| 71 | Սաթիկ Գևորգյան | Գյումրի, Անի 13փ. 6գ շենք բն.3 | 094 61 96 23 | 5903490026 | |
| 72 | Ժենյա Մարգարյան | Գյումրի, Սպարտակի փ. տ. 5 | 094 96 27 16 | 650724006 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | 0 | |
| 73 | Անահիտ Ասոյան | Գյումրի, Տոլստոյի փ. 36շ. Բն.1 | 077 55 07 70 | 5409450019 | |
| 74 | Հռիփսիկ Ղոչոյան | Գյումրի, Ֆանտան, 228/ 249 | 094 21 28 35; 5.30.71 | 6703390053 | |
| 75 | Սոֆիկ Թորոսյան | Գյումրի, Ղուկասյան 8-րդ շարքտ. 19 | 055 73 84 60 | 7003520397 | |
| 76 | Մանյա Թագվորյան | Գյումրի, Գ.Նժդեհ 13շ.բն 27 | 094 19 38 10 | 6012380054 | Սեպտեմբերին տեղափոխվել է ծերանոց |
| 77 | Ստեփան Աղասյան | Գյումրի, Գ. Նժդեհ 6-րդ շ. Բն.12 | 098 81 31 40 | 1801390215 | Մահացել է 14.09-ին |
| 78 | Աբետնակ Շախբազյան | Գյումրի, Մազմանյան փ. 20/1 բն | 094 53 91 04 | 2001380801 | Սեպտեմբերին վերադարձ ընտանիք |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

---------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն
Գործադիր տնօրեն՝ Գ. Տարայան

---------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

Ձևաչափ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 75 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 57 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 7 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 5 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 7 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 68 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –8<br>Բ - 67 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 75 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 75 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 75 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 75 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 31 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) լվացքատան | 20 |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Գ. Տարայան ____________

«06» ____10____ 2023 թ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

-------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն
Գործադիր տնօրեն՝ Գ. Տարայան

-------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

Դրամաշնորհային հաշվետվություն N 2

**1. Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» (Գավառ) |
| **Դրամաշնորհի N** | «1032-11002/23-ԳԳ» |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 03.01.2023 - 31.12.2023 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.07.2023 - 30.09.2023 |
| **Ներկայացման օր** | 06.10.2023 |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Տիգրանուհի Տարախչյան, ծրագրի ղեկավար |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Ծրագրով նախատեսված և հաշվետու ժամանակաշրջանին համապատասխանող հիմնական գործողություններն են.

1) **խնամքի ծառայություններ** հայցող ուղեգրված շահառուների անհատական կարիքների վերագնահատում,

2) անհատական սոցիալական ծրագրի վերանայում,

3) խնամքի ծառայությունների տրամադրում՝ շահառուի հետ կնքված պայմանագրին, ծառայությունների մատուցման ժամանակացույցին և անհատական սոցիալական ծրագրին համապատասխան, մասնավորապես՝

ա) ***կենցաղային սպասարկում*** - 25 շահառուներին տրամադրել սոցիալական խնամողի ծառայություններ (տան մաքրում, շահառուի լողացում, մազերի և եղունգների հարդարում,

անկողնային պարագաների փոխում, հագուստի փոխում, գնումներ, կոմունալ վճարումներ և այլն):

Բ) ***բժշկական օգնություն և սպասարկում*** - Բուժքույրերի կողմից իրականացնել տնայցեր 25 շահառուներին (արյան ճնշման, արյան մեջ շաքարի մակարդակի չափում, ներարկումներ, անհրաժեշտության դեպքում վերքերի և վնասված հատվածների մշակում և վիրակապում, բուժման, դեղերի օգտագործման վերաբերյալ խորհրդատվության տրամադրվում), ուղղորդում դեպի պոլիկլինիկաներ՝ առավել բարդ հետազոտությունների կատարման համար, խորհրդատվության տրամադրում շահառուներին և նրանց օգնող անձանց՝ առողջապահական թեմաների շուրջ՝ առողջ սննդակարգի, անձնական հիգիենայի կանոնների պահպանման, հիվանդությունների կանխարգելման, ծերաբանության և ծերաբուժության վերաբերյալ:

Գ) ***դեղորայքի տրամադրում*** – Յուրաքանչյուր ամիս շահառուներին տրամադրել դեղորայք միայն բժշկի կողմից դուրս գրված դեղատոմսով: Ըստ կարիքի՝ կամավորները և ծրագրի բուժքույրերը լիազորված են շահառուի կողմից որպեսզի ստանան նրան հատկացված դեղորայքը պոլիկլինիկաներից:

Դ) ***սննդի տրամադրում***- Երկու ամիսը մեկ անգամ շահառուներին տրամադրել սննդի փաթեթներ և հիգիենիկ միջոցներ: Սննդի փաթեթի մեջ ներառված են անհրաժեշտ կալորիականությամբ սննդամթերք:

Ե) ***մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում*** – Շահառուների հասարակական կյանքն ակտիվացնելու նպատակով կազմակերպել տարբեր միջոցառումներ՝ նշելով տաղավար տոները, հիշարժան օրերը, ծննդյան օրերը:

Զ) ***ուղեկցման ծառայություններ, շահառուների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն*** - Սոցիալական աշխատողի կողմից շահառուներին տրամադրել սոցիալական խորհրդատվություն/շահերի պաշտպանություն, միջնորդում, ուղղորդում այլ կառույցներ և այլն:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտիաղյուսակ) և միջոցառումների ,նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծառայություններ են մատուցվել 65 տարեկանից բարձր և/կամ 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող 25 շահառուի: Իրականացվել են հետևյալ գործողությունները՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի՝

1.Հաշվետու ժամանակահատվածում իրականացված կարիքի գնահատման արդյունքների հիման վրա սոցիալական աշխատողի կողմից թարմացվել են 25 շահառուի անհատական սոցիալական ծրագրերը, որոնց հիման վրա իրականացվում է շահառուի խնամքը:
Սոցիալական աշխատողի կողմից յուրաքանչյուր շահառուի ամսական կատարվել է նվազագույնը 2 տնայց: Բացի պլանային այցելություններից կատարվել են նաև լրացուցիչ

այցեր՝ ըստ կարիքի: Այցերի ընթացքում տրամադրվել են սոցիալական խորհրդատվություն, ուղղորդում այլ կառույցներ, միջնորդում, շահերի պաշտպանություն և այլն:

*Բոլոր շահառուները տեղեկացված են և պատրաստ են պաշտպանել իրենց իրավունքները: Շահառուների սոցիալական խնդիրները լուծումներ են ստանում համապատասխան ծառայությունների տրամադրման, խորհրդատվությունների, միջնորդական ծառայությունների կամ անմիջական օգնության միջոցով:*

2.Հաշվետու ժամանակահատվածում ծրագրում ընդգրկված 25 շահառուի տրամադրվել են սոցիալական խնամողի ծառայություններ՝ անձնական հիգիենայի ապահովում, տան մաքրում, լոգանքի կազմակերպում, մազերի և եղունգների հարդարում, անկողնային պարագաների և հագուստի փոխում, գնումների իրականացում, կոմունալ վճարումներ, սննդի կազմակերպում և այլն:

Իրականացվել են լվացքատան ծառայություններ: 8 շահառուի անկողնային պարագաները և հագուստը տեղափոխվել է լվացքատուն, լվացվել, արդուկվել և տեղափոխվել է շահառուի բնակարան:

Ծրագրի 10 շահառուի լվացքը իրականացվում է շահառուի տանը, քանի որ վերջիններս ունեն լվացքի մեքենաներ և համապատասխան հարմարություններ դրա իրականացման համար:

Թարմացվել են սոցիալական խնամողների գրաֆիկները՝ ըստ շահառուների կարիքի և խմբի: Տնային պայմաններում ծառայությունները տրամադրվում են շաբաթվա բոլոր օրերին՝ ըստ նախօրոք կազմված գրաֆիկների: Ա խմբի շահառուներին օրական 2 անգամ և ըստ անհրաժեշտության, իսկ Բ խմբի շահառուներին՝ շաբաթական առնվազն 2 անգամ և ըստ անհրաժեշտության: Բոլոր այցերի վերաբերյալ կատարվել են համապատասխան նշումներ տնային թերթիկներում և ծառայությունների մատուցման ստուգաթերթում:

*Լվացքի և լոգանքի կազմակերպման, անձնական հիգիենայի պահպանման, բնակարանի մաքրության ծառայությունների շնորհիվ բարելավված է շահառուների հիգիենիկ վիճակը: Գնումների իրականացման և կոմունալ վճարների մուծման արդյունքում շահառուն ապահոված է իրեն անհրաժեշտ ապրանքներով և կոմունալ ծառայություններով: Հիգիենայի պահպանումն ու տրամադրվող խնամքը նրանց դարձնում է ավելի ինքնավստահ: Կայուն խնամքի ծառայությունների միջոցով բարելավված է շահառուների կյանքի որակը:*

3. Բուժքույրերը իրականացնում են տնայցեր 25 շահառուի՝ ըստ ամսական գրաֆիկների: Ա խմբի շահառուներին կատարվում է շաբաթական նվազագույնը 2 այց, իսկ Բ խմբի շահառուներին՝ շաբաթական նվազագույնը 1 այց: Ըստ անհրաժեշտության կատարվում են նաև լրացուցիչ այցեր:

Բուժքույրերի կողմից իրականացվում են հետևյալ գործողությունները՝ ներարկում, դեղերի տրամադրում (ըստ բժշկի նշանակումների), արյան ճնշման և արյան մեջ շաքարի մակարդակի չափում, անհրաժեշտության դեպքում վերքերի և վնասված հատվածների մշակում և վիրակապում, բուժման, դեղերի օգտագործման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում, բժշկական հաստատություններ ուղղորդում և ուղեկցում:

Բուժքույրերը խորհրդատվություն են տրամադրում շահառուներին և նրանց օգնող անձանց՝ առողջապահական թեմաների շուրջ՝ առողջ սննդակարգի, անձնական հիգիենայի կանոնների պահպանման, հիվանդությունների կանխարգելման, ծերաբանության և ծերաբուժության

վերաբերյալ:

Բուժքույրերի կողմից շահառուներին տրամադրվել է այն դեղորայքը, որը պոլիկլիկաներերից չեն կարող ստանալ: Դեղորայքը շահառուին տրամադրվել է միայն բժշկի կողմից դուրս գրված դեղատոմսով: Բուժքույրերը լիազորված են նաև շահառուի կողմից նրանց հատկացված դեղորայքը պոլիկլինիկայից ստանալու համար:
*Տրամադրված կանոնավոր բժշկական օգնության, առողջապահական ծառայությունների, դեղամիջոցների տրամադրման և բուժքույրերի հետևողականության շնորհիվ պահպանված և բարելավված է շահառուների առողջական վիճակը:*

4. Երկու ամիսը մեկ անգամ 25 շահառուներին տրամադրվել է սննդի փաթեթներ և հիգիենիկ միջոցներ: Սննդի փաթեթի մեջ ներառված է անհրաժեշտ կալորիականությամբ սննդամթերք: Սննդի և հիգիենիկ պարագաների բաշխումը կատարվել է կամավորների և սոցիալական խնամողների կողմից:

5. Հաշվետու ժամանակահատվածում ծրագրային թիմի կողմից կազմակերպվել և անցկացվել է երկու միջոցառում՝

- Սեպտեմբերի 15-ին կազմակերպվել է այցելություն Գավառի երկրագիտական թանգարան, որին մասնակցել են ծրագրի 8 շահառուներ:
- Սեպտեմբերի 17-ին Գավառի Սուրբ Աստվածածին եկեղեցում Խաչվերացի պատարագին մասնակցել են ծրագրի 6 շահառուներ:

*Կազմակերպված այցերի և անցկացված միջոցառումների շնորհիվ բարձրացել է փարեցների արժանապատվության և ինքնավստահության զգացողությունը: Նվազել է նրանց սոցիալական և հոգեբանական մեկուսացման զգացողությունը:*

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիապրոդուկտներ և այլն)**

Տնային խնամք ծրագրի մասին <u>հաղորդում Հանրային ռադիոյում</u>

Բոլոր այցերի, միջոցառումների, իրականացված աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ թղթաբանությունը և նկարները հավաքվում և պահպանվում են:
Եռամսյակային հաշվետվությանը կից ներկայացնում ենք նկարներ և հաջողության պատմություն:

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում էական խնդիրներ կամ խոչընդոտներ ի հայտ չեն եկել: Նախկինում ձևավորված սերտ համագործակցությունը համայնքային կառույցների, պոլիկլինիկայի և ՄԱԾ-ի հետ շարունակվում է:

**2.4Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաջորդ եռամսյակում պլանավորվում է շարունակել ծրագրով նախատեսված բոլոր գործողությունները, մասնավորապես.

1. կենցաղային սպասարկում
2. բժշկական օգնություն և սպասարկում
3. սոցիալ-հոգեբանական օգնություն
4. խորհրդատվություն
5. սննդի, հիգիենիկ պարագաների և առաջին օգնության դեղորայքի տրամադրում:

**2.5Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրով չնախատեսված միջոցառումներ չեն իրականացվել:

**Շահառուներ****

| N | Անուն | ազգանուն | Համայնք,հասցե | Հեռախոս | ՀԾՀ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Սոֆիկ | Ավագյան | Ք. Գավառ Ազատության 21/33 | 077212347 | 5702510097 | |
| 2 | Ռաֆիկ | Շահբազյան | Ք. Գավառ, Ազատամարտիկների 15/2 | 077534245 | 2709390108 | |
| 3 | Ագիզ | Թոփլաղացյան | Ք. Գավառ, Ազատության19/26 | 043388358 | 6903510052 | |
| 4 | Գոհար | Արզաքանցյան | Ք.Գավառ, Ազատության 36/42 | 0264-2-17-20 | 7703390097 | |
| 5 | Ամալյա | Այեյան | .Գավառ, Զորավար Անդրանիկի 70 | 094045163 | 5107475051 | |
| 6 | Արամ | Նաջարյան | Ք.Գավառ, Բարեկամության 4ա, 70/17 | 093604473 | 3008360181 | |
| 7 | Թամարիկ | Սարդարյան | Ք. Գավառ, Ազատության 28/5 | 094909718 | 7005490078 | |
| 8 | Սոնիկ | Վարդանյան | Ք. Գավառ, Կաբելագործների 53/35 | 0264-2-33-54 | 7409470054 | |
| 9 | Սոնե | Պետրոսյան | Ք. Գավառ, Ազատամարտիկների | 093466132 | 6003500069 | |
| 10 | Լիդա | Զիրոյան | Ք. Գավառ, Ազատության 23/18 | 096575551 | 6102360095 | |
| 11 | Գոհար | Իսպիրյան | Ք. Գավառ, Հ.Աբրահամյան 4 | 077108318 | 7912340114 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 12 | Լենա | Դադոյան | Ք. Գավառ, Միքայելյան 11 | 098860658 | 6509480085 | |
| 13 | Մարիան | Սահակյան | Ք. Գավառ, Բունազյան փ 2 նրբ.տ. 79 | 094723898 | 6303480012 | |
| 14 | Սեմար | Հակոբյան | Ք. Գավառ, Բունազյան 2/2 նրբ, տ.3 | ---- | 2402440082 | |
| 15 | Մարիետա | Չարվադարյան | Ք. Գավառ, Սայաթ Նովա 58 | 091283665 | 5509410051 | |
| 16 | Շողիկ | Գափոյան | Ք.Գավառ, Գ.Լուսավորիչ 1 նրբ.տ.4 | 077599336 | 5414520496 | |
| 17 | Թամարա | Արոյան | Ք. Գավառ, Դաշտոյան 1/24 | 094551796 | 5414520496 | |
| 18 | Սվետլանա | Ղարաբաղցյան | Ք.Գավառ, Նալբանդյան 75 | 091529130 | 6007440117 | |
| 19 | Անահիտ | Կիրակոսյան | Ք.Գավառ, Կաբելագործների 44/4 | 098589344 | 8702530306 | |
| 20 | Օֆիկ | Այվազյան | Ք.Գավառ, Բունազյան 2, 4 անց.տ 6 | 094913634 | 6304580096 | |
| 21 | Դիանա | Սարկիսյան | Ք. Գավառ, Ազատության 23/2 | 099028055 | 6102830897 | |
| 22 | Մարիետա | Գոզեյան | Ք. Գավառ, Արծրունի եղբ. 28/2 | 099084873 | 6802420147 | |
| 23 | Օֆիկ | Մարգարյան | Ք.Գավառ, Նալբանդյան 52 | 2-34-89 | 5107345719 | |
| 24 | Սիմա | Մոսյան | Ք. Գավառ, Բարեկամության 4Ա 70/9 | 077273151 | 5809320046 | |
| 25 | Ռիմա | Ռափյան | Ք. Գավառ Ազատության8/22 | 0264-24545 | 6414360074 | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Նախարարության գլխավոր քարտուղար՝

______________________ Ս.Մուրադյան

(ստորագրություն) Կ. Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն

Գործադիր տնօրեն՝

______________________ Գ.Տարասյան

(ստորագրություն)

Կ. Տ.

Ձևաչափ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 25/25 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 22 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 2 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 2 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 1 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 1 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 23 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –3<br>Բ - 22 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 25 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 25 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 25 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 14 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 25 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*)<br>լվացքատուն | 8 |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Գ. Տարայան ____________

«06» ____10____ 2023 թ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն

Գործադիր տնօրեն՝ Գ. Տարայան

------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
2023 թվականի հունվարի 23-ին կնքված
**«1032-11003/23-ՇՏ»** պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրում սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնում (Գյումրի) |
| Դրամաշնորհի N | «1032-11003/23-ՇՏ » |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | 03.01.2023 - 31.12.2023 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.2023-30.09.2023 |
| Ներկայացման օր | 06.10.2023 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Տիգրանուհի Տարախչյան, ծրագրի ղեկավար |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

**Ծրագրի շրջանակներում նախատեսված է տարեցներին տրամադրել հետևյալ ծառայությունները՝**

- Շահառուների կարիքի վերագնահատում
- Ուղղորդում, ուղեկցում և համապատասխան աջակցության ցուցաբերում,
- Օրական մեկանգամյա սննդի տրամադրում՝ (շաբաթական 5 օր)
- Բուժքույրական խնամքի, խորհրդատվության և աջակցության տրամադրում՝ ներառյալ առաջին անհրաժեշտության դեղորայք
- Շահառուների հիգիենիկ խնամքի կազմակերպում, որը ներառում է լոգանքի, վարսահարդարման, լվացքի ծառայությունների մատուցում

- Շահառուի նախասիրությունների բացահայտում և տարաբնույթ ծառայությունների և միջոցառումների կազմակերպում /էքսկուրսիաներ, տոների և հիշարժան օրերի նշում, զբաղվածության և ժամանցի կազմակերպում/
- Խմբակների աշխատանքների իրականացում:

2.2. Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

**Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ հիմնական գործողությունները՝**

- Կենտրոնի սոցիալական աշխատողի կողմից կատարվել է շահառուների կարիքի վերագնահատում, համապատասխան գրանցումներ են կատարվել անհատական սոցիալական ծրագրերում:
- Շահառուներին տրամադրվել է խորհրդատվություն և աջակցություն՝ սոցիալական խնդիրները լուծելու նպատակով:
- Շահառուներին տրամադրվել է սոցիալ-իրավական և սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն, որի շնորհիվ լուծվել են շահառուների ընտանեկան կոնֆլիկտները:
- Շահառուները ուղեկցվել են պոլիկլինիկա, բանկ և ՄՍԾ:
- Կատարվել են 5 հասցեական տունայց՝ բացակա շահառուների մասին տեղեկություններ ստանալու նպատակով:
- Շահառուներին տրամադրվել է սնունդ՝ ըստ նախապես մշակված սննդակարգի:
- Շահառուներին տրամադրվել է բուժքույրական խնամք, խորհրդատվություն և աջակցություն՝ ներառյալ առաջին օգնության տրամադրում և առաջին անհրաժեշտության դեղորայքի տրամադրում:
- Պատրաստվել է 11 շահառուի նպաստի և աջակցության համար փաստաթղթերը և ուղղորդվել են ՄՍԾ:
- Ապահովվել է տարեցների անձնական հիգիենան ու խնամքը: Տրամադրվել է բաղնիք հաճախելու 79 տոմս: Շահառուները օգտվել են լվացքատան ծառայությունից: Լվացվել և արդուկվել են 15 տարեցի անկողնային պարագաները:
- Կամավոր վարսահարդարը հարդարել է 23 շահառուի մազերը:
- Կազմակերպվել է շահառուների զբաղվածությունը խմբակների միջոցով՝
  - «Ծաղիքագործության» խմբակի կամավոր-խմբավարը շարունակել է աշխատել 7 հոգանոց խմբի հետ, որոնք այս ժամանակահատվածում պատրաստել են հողաթափեր (6 հատ), գլխարկներ (3 հատ), հավկիթներ (15 հատ), տակդիրներ (4 հատ), կիսաթև բաճկոն (1 հատ), վզնոցներ (4 հատ), թևնոց (8 հատ), կոճակներ (6 հատ):
  - «Մտքի թռիչք» խմբակի շահառուներն իրենց խմբավարի օգնությամբ պատրաստել են տարբեր դեկորատիվ իրեր՝ պատից փակցնելու համար դեկորներ (3 հատ), հուլունքից պատրաստված ծառեր (2 հատ), ֆետրից պատրաստած

դեկորներ (3 հատ), զարդատուփ (1 հատ): Հելունի և թելի օգնությամբ պատրաստվել է պայուսակ (2 հատ), սեղանի տակդիր (2 հատ):
Խմբավարի կողմից շարունակվել է ուսուցանել մաքրամեի տեխնոլոգիաները: Մաքրամեից պատրաստվել են թևնոց (25 հատ), կախազարդ (40 հատ), գոտի (3 հատ), էջանշան (2 հատ), գլխազարդ (1 հատ), վզնոց (2 հատ), օղեր (1 զույգ):
  - «Ստեղծագործող ձեռքեր» խմբակի շահառուները պատրաստվել են գորգ (2 հատ), հելունով գործած պայուսակ (1 հատ), ջինսից պայուսակ (4 հատ), շշից ծաղկաման՝ սուրճի հատիկներով (1 հատ), հելունով գործած խաղալիքներ (2 հատ), թևնոց հուլունքներից (35 հատ), մատանի հուլունքներից (2 հատ), կրծքազարդ (2 հատ) :
  - Երգի խմբակի կամավոր խմբավարը շարունակում է աշխատել 8 հոգանոց խմբի հետ: Սովորել և ներկայացրել են Կոմիտասի երգացանկից 7 երգ:
- Շահառուների ամենօրյա ժամանցն ապահովելու համար կատարվել են հետևյալ գործողությունները՝
  - Անցկացվել են ինտելեկտուալ խաղեր և հոգեբանական թեստեր
  - Կազմակերպվել են տեղեկատվական զրույց-քննարկումներ՝ ինչպես պաշտպանվել շոգից և արևի ուլտրամանուշակագույն ճառագայթներից, սեզոնային մրգերի և բանջարեղենների օգտակար և վնասակար հատկությունների, շոկոլադի և սուրճի մասին:
  - Անցկացվել են միջոցառումներ՝ նվիրված Մհեր Մկրտչյանի 93-ամյակին, Երվանդ Մանարյանի 99-ամյակին և Կոմիտասի 154-ամյակին: Միջոցառումների ավարտին ցուցադրվել են փաստա-վավերագրական ֆիլմեր և կազմակերպվել է համերգ Կոմիտասի երգացանկով:
  - Կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված «Շոկոլադի համաշխարհային օրվան», «Գիտելիքի միջազգային օրվան», «Սուրճի համաշխարհային օրվան»:
  - Կազմակերպվել է էքսկուրսիա «Մելնիցա» հանգստյան գոտի:
  - Շախմատի միջազգային օրը կազմակերպվել է մրցույթ: Հաղթող 3 մասնակիցները ստացել են պատվոգրեր և նվերներ կենտրոնի կողմից:
  - Կազմակերպվել է միջոցառում նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 32-ամյակին:
  - Անցկացվել է տեղեկատվական միջոցառում՝ նվիրված սրտի համաշխարհային օրվան:
  - Ազատություն ռադիոկայանը պատրաստել է ռեպորտաժ Թաղիքագործության խմբակի կատարած աշխատանքի մասին:
  - Համացանցում հրապարակվել է Հանրային Ռադիոյի «Երկրորդ շնչառություն» հաղորդման հարցազրույցը:
  - Բուժքրոջ հետ անցկացվել է տեղեկատվական միջոցառում բերանի խոռոչի հիգիենայի մասին: Ցուցադրվել են բերանի խոռոչը ճիշտ խնամելու մասին նյութեր:
- 13 շահառու շարունակում են այցելել «Ալցհայմերի խնամք Հայաստան» հասարակական կազմակերպության «Առողջ ուղեղի հայկական ծրագրի» շրջանակում Գյումրու «Լոֆթ» ակումբում կազմակերպված «Հիշողության սրճարան» ժամանցի միջոցառմանը:

*Վերոնշյալ գործողությունների արդյունքում շահառուները սոցիալականացված են, մեկուսացված չեն, ներգրավված են տարբեր խմբակների, սոցիալական և ժամանցային միջոցառումների մեջ: Նրանք շրջապատված են խնամքով և ուշադրությամբ: Նրանց մեկուսացման և մենակության զգացումը հասցվել է նվազագույն մակարդակի:*
*Բարելավված ներառումը լայն հասարակության մեջ ակնառու է, նրանք իրենց համարում են հասարակության լիիրավ անդամներ:*

2.2. Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

- Հարցազրույց Հանրային Ռադիոյում «Երկրորդ շնչառություն» հաղորդմանը:
  https://m.facebook.com/story.php?story_fbid=pfbid02ooCc7hTQx5BMdSriq6xBMGP9ws89QPywQDZQJXGF6ThtjWBb5Wo1kRqABUBY7j8Dl&id=100064628296289&mibextid=Nif5oz
  https://www.youtube.com/watch?v=2SgLSBzDtLA

- Հուլիսի 22, Թաղիքագործության խմբակի տատիկների հարցազրույցը Ազատություն ռադիոկայանին

https://fb.watch/n5mr9b0DeK/?mibextid=Nif5oz4
https://www.facebook.com/reel/131511426654546

Միջոցառումների, իրականացված աշխատանքի վերաբերյալ հավաքվում և պահպանվում է անհրաժեշտ թղթաբանությունը և նկարները:
Եռամսյակային հաշվետվությանը կից ներկայացնում ենք հաջողության պատմություն և նկարներ:

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում դժվարություններ և խնդիրներ չեն առաջացել

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսվում է իրականացնել՝
- Ամենօրյա ցերեկային խնամք (շաբաթական 5 օր)
- Սոցիալ-հոգեբանական օգնություն
- Համագործակցություն ոլորտը սպասարկող կառույցների հետ
- Բուժքույրական սպասարկում և խնամք

- Ժամանցային ինտելեկտուալ խաղեր և միջոցառումներ
- Նախատեսվում է կենտրոնում կազմակերպել և նշել մասնագիտական, հիշատակի և այլ տոները՝
    - Հոկտեմբերի 1-ին Տարեցների միջազգային օրը
    - Հոկտեմբերի 2-ին Ուժ չգործադրելու համաշխարհային օրը: Տեղեկատվական զրույց-քննարկում բռնության հետևանքների մասին:
    - Հոկտեմբերի 3-ին Արմեն Ջիգարխանյանի 88-ամյակին նվիրված միջոցառում, ֆիլմի դիտում «Տղամարդիկ»:
    - Հոկտեմբերի 11-ին Տեսողության համաշխարհային օրը:
    - Հոկտեմբերի 12-ին Ծխախոտի համաշխարհային օրը:
    - Հոկտեմբերի 16-ին Բնական աղետների ազդեցության նվազեցման օրը (փորձնական տարհանում):
    - Հոկտեմբերի 17-ին Աղքատության վերացման համաշխարհային օրը:
    - Հոկտեմբերի 24-ին Սոս Սարգսյանի 94-ամյակին նվիրված միջոցառում: Ֆիլմի դիտում «Գիքորը»:
    - Նոյեմբերի 14-ին Շաքարային դիաբետի դեմ պայքարի միջազգային օրը :
    - Դեկտեմբերի 1-ին Ձմռան առաջին օրը
    - Դեկտեմբերի 15-ին նշել Լյուդվիգ Վան Բեթհովենի 253-ամյակը:
    - Դեկտեմբերի 25-ին Ամանորյա միջոցառում:

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

- Հայկական Կարիտասի ծրագրերի կողմից տրամադրվել է տնտեսական, հիգիենիկ պարագաների և սննդի փաթեթներ՝ 2 անգամ:
- Անհատ բարերարների կողմից տարեցներին տրամադրվել են հագուստ 2 անգամ,
- Անհատ մարդկանց կողմից կենտրոնի շահառուներին 1 անգամ տրամադրվել է հյուրասիրություն (մատաղ):

**Շահառուներ****

| № | Անուն, Ազգանուն | Հասցե | Հեռախոս | ՀԾՀ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Սամվել Գյոզալյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Պուշկինի 3 նրբ, տուն 12/1 | 094242669 | 4010530235 | |
| 2. | Թամարա Կարապետյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Անտառավան 5 թաղ., 21ա շ., բն.14 | 098165284 | 6405500276 | |
| 3. | Աիդա Մարտիրոսյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Անտառավան 3թաղ., 227/154 տնակ | 077381942 | 6301420055 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4. | Սրբուհի Առաքելյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Խ.Հայրիկ, Սիմաֆոր շ.20, բն.5 (Արեվելյան շրջանցող ճանապ. 5) | 098463453 | 5507500312 | |
| 5. | Տիրուն Բեյբության | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Տ.Ճարտարապետ 7/5 շ., բն.13 | 094635731 | 6811400013 | |
| 6. | Գրիգոր Ամիրյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Մուշ 2 թաղ., 2գ շ., բն. 49 | 094195490 | 1309540012 | |
| 7. | Գյուլնարա Հովհաննիսյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ա.Խաչատրյան փող., շ.2, բն.51 | 077195810 | 6001580746 | |
| 8. | Լենա Մովսիսյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Հնոցավան 3 շարք, տուն 25 | 094840832 | 7203500330 | |
| 9. | Սուսաննա Աթոյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Մովսես Խորենացի 46/1շ, բն.34 | 093438916 | 8110520022 | |
| 10. | Մարգարիտ Կարապետյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ջափարիձե փող, տուն 28 | 5-04-38; 094085474 | 6305530017 | |
| 11. | Ալմաստ Պողոսյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Հալաբյան փող., շ.10/1, բն. 30 | 077619025 | 7607510222 | |
| 12. | Սվետլանա Ասատրյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Տեքստիլագործների փողոց, տուն12 | 098372196 | 6804560396 | |
| 13. | Սիլվա Ղարիբյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Անի թաղ. 13 փող. շ. 9, բն 7 | 077246374 | 7603540011 | |
| 14. | Գուարիկ Սողոմոնյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Կամոյի 42ա շ., բն.60 | 098465759 | 5208540266 | Մահացել է 28,09,2023 |
| 15. | Բուրիկ Ներսիսյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Կամոյի 42ա շ., բն. 11 | 57332; 093325687 | 5710480037 | |
| 16. | Մարիյա Խլղաթյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ղուկասյան փող., 15 շարք,, տուն 22/1ա | 098354523 | 8005520313 | |
| 17. | Անահիտ Պետրոսյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շիրակացի փակուղի 1-ին, տուն 4 | 094507572 | 8008560134 | |
| 18. | Ջեմմա Մելքոնյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Անտառավան 4ա շ, բն., 32 | 077170442 | 6704420177 | |
| 19. | Սանդուխտ Ամիրխանյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ս.Մատնիշյան փող., տուն 343 | 093657848 | 5112460466 | |
| 20. | Սիլվա Գևորգյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ջիվանու փող., տուն 98/21 | 096979866 | 7111470206 | |
| 21. | Վարդանուշ Վիննիչենկո | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Սահմանապահների փող., տուն 41 | 094170243 | 6702430094 | |
| 22. | Ասյա Մովսիսյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Մուշ-2, շ.4/31, բն.38 | 094465570 | 7409410140 | |
| 23. | Քնարիկ Գևորգյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ջիվանու փող, տուն 123 | 077469964 | 7608390352 | |
| 24. | Հրաչյա Հովսեփյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ներսես Շնորհալու փող., շ.25, բն.25,26,27 | 098122120 | 1107572614 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 25. | Տատյանա Էլոյան | Գյումրի, Պ.Սևակ 15 ա շենք, բն. 23 | 093505185 | 5914510015 | |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

-----------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն
Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան

-----------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.